ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/25

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2021թ. թիվ 26/26/1186-2021 գրությամբ «Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ դատական դեպարտամենտի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 25.01.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-252 գրության հիման վրա 01.02.2021թ. թիվ 26/26/1186-2021 գրությամբ նախաձեռնել է «Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ն մասնակցել է Դատական դեպարտամենտի կողմից հայտարարված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/04» ծածկագրով ընթացակարգին: Մեր կողմից բաց թողում է իրականացվել, որի շտկման մասին Ընկերությանը ծանուցվել է ժամը 18:02-ին, որից հետո կապ ենք հաստատել և տեղեկացրել, որ աշխատանքային ժամը ավարտված է, բայց Դատական դեպարտամենտից պնդել են, որ շտկումը պիտի իրականացվի այդ օրվա ընթացքում: Ընկերությունը շտկել է թերությունը, ավելացնելով 3% չնախատեսված ծախսերի բաժինը, և կրկին անգամ ստուգել է, որպեսզի հայտնաբերի Պատվիրատուի կողմից հայտնաբերված թվաբանական անճշտությունները և չի հայտնաբերել, որի վերաբերյալ գրավոր ծանուցվել է և շտկված տարբերակը ուղարկվել է, քանի որ արդեն բավականին ուշ ժամ էր բնականաբար Պատվիրատուի կողմից որևէ արձագանք չի ստացվել:

Խնդրում ենք որոշում կայացնելիս ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Ընկերությունը ծանուցվել է ոչ աշխատանքային ժամի և շտկման աշխատանքների համար ժամանակի խնդիր է ունեցել ոչ իր մեղքով»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/25 ընթացակարգի շրջանակներում 08.02.2021թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ դատական դեպարտամենտը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.01.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-252 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ Ձեզ է ներկայացվում Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/04» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակում «Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/25 ընթացակարգի շրջանակներում 08.02.2021թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/25 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/25 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ դատական դեպարտամենտի կողմից իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության 2.5-րդ ենթակետով արձանագրվել է, որ «Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ՝ ներկայացված հայտը հաստատված է այլ անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն հայտով ներկայացված չէ վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Նույն արձանագրության 3.12-րդ ենթակետով արձանագրվել է, որ «Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ.

- 1-ին չափաբաժնի մասով ներկայացված հաստատված, լրացված ծավալաթերթ-նախահաշվի, որում «քանակը» սյան որոշ տողեր սխալ են լրացված, ինչպես նաև բացակայում է հրավերով նախատեսված «Չնախատեսված ծախսեր՝ 3%» տողը,
- 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված հաստատված, լրացված ծավալաթերթ-նախահաշվի, որում առկա են թվաբանական անճշտություններ, ինչպես նաև բացակայում է հրավերով նախատեսված «Չնախատեսված ծախսեր՝ 3%» տողը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի (հետայսու նաև՝ Համակարգ) միջոցով ***13.01.2021թ.*** ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.1-րդ ենթակետով արձանագրվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը ընդմիջել մինչև 2021թ. հունվարի 18-ը՝ ժամը 14:00-ն:

Նույն արձանագրության 1.2-րդ ենթակետով արձանագրվել է, որ ուսումնասիրվել են «Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը, սակայն 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված հաստատված, լրացված ծավալաթերթ-նախահաշվի 6-րդ տողում, հետևաբար և «Ընդամենը» տողերում առկա են թվաբանական անճշտություններ, այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, վերջինիս հայտը 2-րդ չափաբաժնի մասով գնահատել է անբավարար և մերժել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.02.2021թ. թիվ 26/26/1186-2021 գրությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 25.01.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-252 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:</u>***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***<u>շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ</u>՝*** հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում՝ կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ՝ նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես

իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ ***<u>հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը</u>***: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.01.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության 2.5-րդ ենթակետով արձանագրվել է, որ «Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ՝ ներկայացված հայտը հաստատված է այլ անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն հայտով ներկայացված չէ վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Նույն արձանագրության 3.12-րդ ենթակետով արձանագրվել է, որ «Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ.

- 1-ին չափաբաժնի մասով ներկայացված հաստատված, լրացված ծավալաթերթ-նախահաշվի, որում «քանակը» սյան որոշ տողեր սխալ են լրացված, ինչպես նաև բացակայում է հրավերով նախատեսված «Չնախատեսված ծախսեր՝ 3%» տողը,
- 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված հաստատված, լրացված ծավալաթերթ-նախահաշվի, որում առկա են թվաբանական անճշտություններ, ինչպես նաև բացակայում է հրավերով նախատեսված «Չնախատեսված ծախսեր՝ 3%» տողը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Համակարգի միջոցով ***13.01.2021թ.*** ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.01.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.1-րդ ենթակետով արձանագրվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը ընդմիջել մինչև 2021թ. հունվարի 18-ը՝ ժամը 14:00-ն:

Նույն արձանագրության 1.2-րդ ենթակետով արձանագրվել է, որ ուսումնասիրվել են «Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը, սակայն 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված հաստատված, լրացված ծավալաթերթ-նախահաշվի 6-րդ տողում, հետևաբար և «Ընդամենը» տողերում առկա են թվաբանական անճշտություններ, այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, վերջինիս հայտը 2-րդ չափաբաժնի մասով գնահատել է անբավարար և մերժել:

Այսպիսով՝ Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա) պարբերությամբ սահմանվում է, որ ***հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ՝*** հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները:

«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/04» ծածկագրով ***ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով սահմանվել է ծավալաթերթ-նախահաշիվը***:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 2.6-րդ ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը հայտով ներկայացնում է շինարարական աշխատանքների գնման դեպքում՝ իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ***:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5-րդ կետի 5.3-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:***

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: ***Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպիսով՝ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից սույն գործի շրջանակներում տրամադրված «Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 13.01.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանության շտկման արդյունքում ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը, արձանագրում եմ, որ ծավալաթերթ-նախահաշվում նշված ընդհանուր արժեքը՝ 1 917 650 ՀՀ դրամ, համապատասխանում է վերջինիս կողմից Հավելված 2-ով՝ գնային առաջարկով, 2-րդ չափաբաժնի համար ներկայացված ընդհանուր գնին՝ 1 917 650 ՀՀ դրամին, սակայն ծավալաթերթ-նախահաշվի 6-րդ տողում առկա է թվաբանական անճշտություն, այն է՝ քանակ՝ 188 044 միավորի արժեք՝ 2526, ընդամենը՝ 475 000, մինչդեռ ընդամենը տողը ստացվում է 474 999.144, որի արդյունքում ընդամենը գինը՝ Ընկերության կողմից ծավալաթերթ-նախահաշվով աշխատանքների իրականացման համար առաջարկված միավորի գները

հիմք ընդունելով, ստացվում է 1 917 649 ՀՀ դրամ՝ առաջացնելով գնային առաջարկով ներկայացված ընդհանուր գնի նկատմամբ շուրջ 1 դրամի անհամապատասխանություն, հետևաբար գտնում եմ, որ նման պայմաններում գնահատող հանձնաժողովը, կիրառելով Կարգի 42-րդ կետը և մերժելով վերջինիս հայտը, գործել է իրավաչափ:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, գտնում եմ, որ «Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ն «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/04» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից դիրքորոշմամբ ներկայացված այն դիտարկմանը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է ժամը 18:02-ին, որից հետո Ընկերությունը կապ է հաստատել Պատվիրատուի հետ և տեղեկացրել է, որ

աշխատանքային ժամը ավարտված է, սակայն վերջինս պնդել է, որ շտկումը պետք է իրականացվի այդ օրվա ընթացքում, ապա սույն մասով գտնում եմ, որ նման դիտարկումն անհիմն է, քանի որ գործում առկա նյութերի համաձայն՝ Ընթացակարգի քարտուղարն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ Ընկերությանը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ծանուցել է ***13.01.2021թ.***՝ Համակարգում կցելով թիվ 4 արձանագրությունը, համաձայն որի՝ Ընկերությանն առաջարկվել է հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները շտկել մինչև սույն թվականի հունվարի 14-ը ներառյալ, ուստիև վերոնշվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ Ընթացակարգի քարտուղարի կողմից պահպանված է սույն մասով Կարգի 41-րդ կետով նախատեսված ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.02.2021թ. թիվ 26/26/1186-2021 գրությամբ «Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Սահակյան Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**